

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հոյ՛ 8 ՄՆՃ.
Պաշտօնաց 10 ՄՆՃ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄՆՃ.
Պաշտօնաց 5 ՄՆՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հաւմար 3 դուրուշ, երկու անգամի հաւմար 2 դուրուշ, աւելի անգամներու համար դատ սակարկութիւն կըլայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՀԱՅՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կազմի Ահմէտ Մուխթար փաշայի պատերազմն և Սուլթանայի ուժեղութիւնն այս առումը զինուորական ամենէն կարեւոր լուրերն են : Մուխթար փաշա հոկտ. 3 թուով հեռագրաւ մը կը ծանուցանէ թէ նոյն օրն՝ երկուշաբթի՝ ուղղման աւելի նըպատաւոր իրքէ՛մը բռնել ուղերով իւր բանակեալին և Կարսի միջին, առաւօտուն պէտք եղած միջոցները ձեռք առած էր : Բայց թշնամին Հաճի-Վէլիի գիւղէն ելաւ և մեծ զօրութեամբ Էվլիա-թէփէսիի վրայ յարձակեցաւ, որ երեք թնդանօթով պաշտպանուած էր : Այս բոլորը Պուլսնը գիւղին վրայ է՝ Օսմանեան կեդրոնին հոյ գծին ներքեւ : Էվլիա-թէփէսիի վրայ գտնուած չորս փաշա Օսմանեան զօրքը չորս ժամ գիւմադրեց թշնամոյն բռնուն յարձակմանց, որք մեծ և փոքրը թնդանօթներու հրով կը սաստկանային : Թէեւ Կազմի Մուխթար փաշա իւր թեւերէն օգնութիւն չըկեց Էվլիա-թէփէսիի պաշտպանող վաշտերուն, բայց ասոնք չորս ժամ անըման քաջութեամբ պատերազմելէ ետեւ՝ իրենց ամբողջութիւնները թողու պարտաւորեցան : Էվլիա-թէփէսիի պաշտպան Ռուսաց ձեռքն անցնելէ ետեւ, Օսմանեան ուրիշ ռազմական կէտերը պահել անկարելի ըլլալով, Կազմի Մուխթար փաշա պարտաւորեցաւ Կարս քաջուիլ և հոն իւր զօրաբաժնին հետ միանալ : Մուխթար փաշայի հեռագիրը կը ծանուցանէ թէ քիչիւր հաճի Բաշա և Էվմէր փաշաներն, և Լիւիա Հասան ֆեաղիմ, Մուսա և Շէվքէթ փաշաներն իրենց հրամանաց ներքեւ եղած ուրիշ զօրաբաժնի մը հետ Գարաճա (կամ Ուրաճա) Տաղ մնացած էին : Բայց կը փախցուի որ ասոնք թըշնամիէն չըպարտաւոր ըլլան : Կերեւի որ Մուխթար փաշայի անմիջական հրամանաց ներքեւ գտնուող զօրաբաժնի մը կարա քաջութեամբ է, ուր երկուշաբթի օրն, ինչպէս ինք կը ծանուցէ, յատակադիմեր կը պատրաստէր թշնամիէն վրէժ առնելու : Օսմանեան հրամանատարն այս ձախորդութեան պատճառ կը նշանակէ թշնամոյն ըստացած բազմաթիւ օգնութիւններն, երկու հարիւրէն աւելի թնդանօթ ճակատամարտի հանելն, որք նոր և խիստ յաջողակ թնդանօթաձիգ զօրաց ձեռքը դործածուելով՝ անշուշտ գծովային անտանելի կրակ մը կրնէին Օսմանեան զօրաց վրայ, և վերջապէս խախտող պատերազմաց մէջ իրենց քաջութեամբն ու ճարտարութեամբն Վեհ Սուլթանին գոհունակութեանն արժանի եղող բազմաթիւ բարձրաստիճան սպայից մահուամբ կամ վիրաւոր :

մամբ պակսիլը : Մուխթար փաշա իւր կորուստն ինն հարիւրի չափ կը հաշուէ, մինչդեռ թշնամին դուռը ու կէս հեծեալօր և երեք չորս փաշայի չափ հետեակ կորուստեր է : Ռուսք այս յաջողութենէն ետեւ՝ Ալէքսանդրաբօլէն մինչև Կարս գրեթէ բոլոր գիւղերը գրաւած կըլլան դարձեալ : Բայց այս յաջողութիւնն անցեալ գարնան չափ նպատաւոր չիրնար ըլլալ : Այն ատեն ժամանակ կար մինչև ձմեռ Կարսը պաշարելու : Բայց հիմա որ այս բերդաքաղաքին մէջ շատ մթերք լըցւած է, և անօդուս բերաններն՝ այսինքն բնակիչները՝ գրեթէ բոլորովին դուրս հանուած, Ասիոյ Օսմանեան գլխաւոր ամրոցը կրնայ ամիսներով պաշարման տակալ : մինչդեռ ձմեռւան սաստիկ եղանակը վրայ գալով, Ռուսք անհուն ջանք թափելու պիտի ստիպուեն իրենց թափելու պիտի ստիպուեն իրենց թափելու պիտի հաստատուելու համար : Բայց Ռուսք հիւսիսային սառնամանեաց վարժութեամբ ըլլալով, գուցէ ձմեռն ալ պատերազմը շարունակեն, ինչպէս իրենց գործողութիւններէն կը հասկցուի : Գիշ օրէն Մուխթար փաշայի այս նոր գրից մէջ ձեռք առած պաշտպանողական միջոցներուն վրայ ալ թեւեւ անգիտութիւն կրնայ առնուիլ : Օսմանեան հրամանատարն իւր ետեւի կողմն ալ բազմաթիւ հզօր գիւղեր ունի, ուր արուեստական ամրութիւնք ալ չկան : Եւրոպայի մը կը պատրաստուէր, և Կարսի ճանապարհները պաշտպանելու համար Տէփէ-Պոյնտի կիրճն ամրացած է : Կարելի է որ թէեւ Կարսի պաշարման վրէժ լըլայ, Մուխթար փաշա ետ քաջուի դարձեալ ամուր գիւղերը վրայ, և օգնութեան սպասէ : Բայց որովհետեւ լուր կուտայ թէ թշնամիէն վրէժ առնելու միջոցներուն վրայ կը խորհի, գուցէ ինք յարձակողական սկսի և Ռուսերն իրենց դըրաւած գիւղերէն վանէ : Խոսքով Հագգի փաշային Պայպաղի կողմն ունեցած բանակը բազմաթիւ է : Եւ քանզի անոր գէնն երող Տէր Ղուկասովի բանակն ալ տկարացած է Միքայէլ Մեծ գուքին զրկուած օգնութիւններով : Մուխթար փաշա ալ կըրնայ առանց վտանգի խոսքով Հագգի փաշային բանակէն իրեն օգնութիւն բերել :

նայի նաւահանգիստը միայն Սիւննէ փայտաշէն Օսմանեան թնդանօթաձիգ նաւն և Զիարէթ անուն փոքր և հին շոգեմակոյի մը կար : Այս վերջինն ընկղմեր է : Իսկ Սիւննէ՝ որ Ռուսաց կրակէն բաւական մնացած էր, կըլլաւ սակայն տղաւիլ և վառնա համեմել : Այս ալ չորս Օսմանեան թնդանօթաձիգ մակոյկներէն մին է՝ որք տասնեութ տարի առաջ Անգլիա շինուեցան : Սուլթանի քաղաքին վերին կողմն և Յունաց Ս. Նիկողոս եկեղեցին հոյ ճարակ եղած են, բայց ումարտութեան միջոցն բնակիչ չէր մնացած : Ռուսաց յարձակումը վաղուց ՚ի վեր ծանուցուած և ետ մնացած էր, ուստի կը կարծուէր թէ բոլորովին ետ ձգուած էր, և Օսմանեան զրահաւորք ալ բացակայ էին : Հօգարթ փաշա Սե ծովու մէջ Ռուսաց պատերազմական նաւերը գիտելու զրկուած էր, և Կերչի կամ Անարայի կողմերը դնացած կը կարծուէր : Զրահաւոր նաւատորմին հըրամանատար Հասան փաշան ալ քանի մը զրահաւորներով վառնա կը դըրաւուէր, և երբ Սուլթանի ումարտութեան լուրն առաւ, սաստիկ փոթորկալից օդի ժամանակ ճանաչաւ ելաւ հոն երթալու համար : Գուցէ Ռուսք այս ումարտութիւնէն ետեւ Սուլթանի դրաւած են, ուր Օսմանեան զրահաւոր նաւատորմին գործողութեանց վրայ ՚ի մօտ կրնայ լըր առնուիլ, և հաւանականաբար հիմայ ալ Օսմանից Ռուսերը ումարտութեն, եթէ արդէն Սուլթանի նաւահանգիստը ծովային ակններ (թօրիլ) դըրած չեն : Ռուսք Սուլթանի ալ առնելով Գանուբի երեք Ռեբաններն ալ, այն է Ս. Գեորգ, Գիլիա և Սուլթան գրաւած կըլլան, և կը կարծուի որ այս գիւղերը պաշտպանողական վիճակի մէջ դնելէ ետեւ, գետին բերանն ընկղմած քաղալից նաւերը հանելու չեղող տղաւիլ նաւեր կուլան իրաւահաստատելու, և գուցէ Սե ծովի ճանապարհաւ իրենց բաժնիներուն Օսկայէն և ուրիշ Ռուս նաւահանգիստներէ մթերք հասցնելու համար :

ընդ մերթ թնդանօթ կարճակուէր առանց կարեւոր դէպքերու : Բլէֆա, յի կողմէն նոր լուր չկայ : Ռուսոն գիւ և Եփէսիոյ ումարտութիւնն ալ դադարած է քանի մ'օրէ ՚ի վեր : Երէկուան Թրիքտի շոգեմակոյ եկած Եւրոպական լրագրաց վերջին թիւերուն մէջ հետեւեալ լուրերը կուտայ : Վիէննա 9 հոկտ. Զարին բանակակցութիւնն եկած վերջին պաշտօնական հեռագիրն հետեւեալ լուրերը կուտայ : « Բլէֆայի առջև կրակը դադարեցաւ : Պուլսոյ ուրիշ պատերազմական կէտերուն վրայ ալ ասին գործողութիւնք գտողութեւն » : Կը ծանուցուի միւսեղանային թէ Ռուսական զօրաց հրամանատարներուն մէջ բազմաթիւ փոփոխութիւն կը լինին, որոցմէ կը հասկցուի թէ Ռուսք պատերազմն ամենայն սաստիկութեամբ շարունակելու դիտաւորութիւն ունին : Բլէֆայի առջև խառնադուլութեանց աշխատութիւններն ամենայն փութով կը շարունակեն, առանց ուղիւղու օդին ցրտութեան և յորդաճոս անձրեաց : Թօթլէսէն զօրաւորն անձամբ կը հսկէ աշխատութեանց, և կարծիք կայ թէ խառնադուլութիւնը մինչև դալ ամսոյ վերջը պիտի շարունակէ : Բեդրադուրի 9 հոկտ. Գերմանիա հաճութիւն տուաւ զինուորական ծառայութեան փախուղ և Գերմանիոյ հոյն ապստամբող ռուս զօրականները Ռուսիոյ յանձնելու : Ընկերապարտական մեծ դաւադրութիւն մ'երեւան ելաւ Ռուսիոյ մէջ : Գաւաղիք ամեն կարգի մարդիկ են՝ Ռուսիոյ ամեն կողմը ցրուած : Մինչև ցարդ 600 էն աւելի մարդիկ բռնուեցան : Հաւանական է որ Կայսրն յառաջիկայ ձմեռը Գիլիա մէջ անցունէ, ուր պալատ մը կը կը պատրաստուի իրեն : Գանի մը Էն լրագրից կը ծանուցանեն թէ Ալէքսանդր Կայսրը դիտաւորութիւն ունի ներկայ պատերազմէն ետեւ սահմանադրութիւն մը շնորհելու Ռուս ժողովրդեան : Արդէն մասնաժողով մ'իսկ կազմուել է Սահմանադրութիւնը խմբագրելու համար : Բլէֆա 9 հոկտ. Գուսը ծանուցադիր մը գրից Սերվիլի կառավարութեան՝ բացառութիւն ինդրելով ըրած՝ զինուորական պատրաստութեանց, Ռուսիոյ և Ռումանիոյ հետ բանակցութեանց և մանաւանդ ռուս հիւպատոսին Պէլիւստի մէջ ներկայութեան վրայ : Գուսը կը յայտնէ ծանուցադրին մէջ թէ պիտի պատրաստուի յատուկ զօրծակատար մը զրկել ՚ի Պէլիւստի քննութիւն մ'ընելու համար թէ իւր գերեզմանական իրաւանց հակառակ իրողութիւնը կը դործուին թէ ոչ : Կըսուի նաեւ թէ Գուսը ծանուցադիր մ'ալ մեծ տէրութեանց գրիցով՝ պիտի բողոքէ Ռուսիոյ ջանքից դէմ, որ Սերվիլի և Յունաստան իրեն հետ միաբանեցնելու կաշխատի Թուրքիոյ դէմ : Վիէննա 10 հոկտ. Ռուսիոյ կայսերական պաշտպան Գուսը :

բայց դուռը երբեք տակաւին կը չարունակեն Պուրբէյն անցնելու և պատերազմին ասպարէզն երբեք ալ չի կրնար չարանալ Պուրբէյն հասած ռուսական զօրաց թիւն 100000 ի կը հասցնեն :

Թիֆլիզ 10 հոկտ .

Վերջին պատերազմաց մէջ Մուխոմար փաշան շատ մարդ կորսնցուց , որոց թիւը մեծաւուր ու վերաւոր 3000 էն պակաս չեն հաշուեր : Այս կորուստներով տրկաւ րացած , Մուխոմար փաշան երէկ Գրգըլ-Քէփէի և Սուպաթանի ամրացեալ դիրքերը պարպել տուաւ իւր զօրաց և ետ քաշեց : Ռուսք ալ անոնց ետեւէն խնայով ճակատամարտ ընդունելու հարկադրեցին Զէյնսին քով , ուսկից նորէն ետ մղեցին մեծ կորուստով : Թուրքաց բանակն Ալա-ճա-Տաղի բարձունքը քաշուեցաւ : Ռուսերն ալ օդին գէշութեան պատճառաւ ինքնին թողուցին իրենց առած դիրքերն :

Օրջովա 12 հոկտ .

Կուրքո զօրավարին բաժինն որ ութ գունդ հեծելազօրէ և 43 թիւն թնդաւն ինքնեքէն կը բաղկանայ , Սէյփէին ու Լօֆ-չայէն ճանաչալ ելաւ դէպ ի Սօֆիա՝ Թուրքաց պաշարները քննելու և յետոյ Սեր-վաց բանակին հետ միանալու համար , որ դէպ ի սահմանագրութիւն կը քայլէ :

Եթէ այս շարժումն յաջողի , Կուրքո զօրավարը Սերվօ-Ռուսական բանակին հը-րամանատարութիւնը պիտի առնու և Բը-լէֆայի վրայ պիտի յարձակի ետեւ կողմէն :

Վիեննա 11 հոկտ .

Պէրլուտէն կը հեռագրեն թէ Սերվիոյ և Ռուսիոյ մէջ բանակցութիւններն ի դուրս ելնելով դաշնադրութիւնն ստորագրուեր է : Սերվիոյցէ 40000 զօրով պա-տերազմի պիտի մտնեն , և արդէն քանի մը զօրաբաժին սահմանագրութիւնը զըր-կուեր են : Ռուսիա ալ ամէն տալիս մէկ միլիոն ռուպլի պիտի վճարէ Սերվիոյ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Գարեաւէն հոկտ. 4/16 թուով քաշուած պաշտօնական ռուս հեռագիր մը կըսէ թէ Մուխոմար փաշայի բանակին ձախ թիւն , որ Ալաճա-Տաղի դիրքերուն մէջ ամրացած էր , իւր եօթն հրամանատար փաշաներով և 32 թնդանօթով Ռուսաց անձնա-տուր ըլլալու հարկադրուեր է :

Սակայն այս առաւօտեան Թուրք լրագիրք բարեբաղդաբար սուտ կը հանեն այս լուրը :

Վաթթ լրագիրք կը հաւատտէ թէ երէկ Մուխոմար փաշայէն առ Մեծ-Եպարքոն հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մուխոմար փաշան Հաղը Պողադի կիրճը բռնած է , Հա-ճի Բաշիա փաշան ալ անկէ 12 ժամ հեռաւորութեամբ Սու-Պաթանի մօտ Զին-Քէփէի ըստած բարձր և ա-մուր գլխիքը բռնած է , ուսկից կը յուսացուի եղբի որ պիտի կրնայ Մուխոմար փաշայի հետ միանալ :

Վէսթի (Հաքիքէթ) լրագիրն ալ մասնաւոր աղբիւրէ առնելով կը հաւատտէ թէ Հաճի Բաշիա փաշային զօրադուռը ճարտար շարժմամբ մը յաջողեր է պաշարումէ ազատելով Կարս երթալու և Մուխոմար փաշայի հետ միանալու :

Յիշեալ թերթը կուսեցնէ թէ մեծ յոյս կայ որ Մուխոմար փաշան իւր կրած ձախուրածին վրէժը քիչ օ-րէն պիտի կրնայ հանել :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 13 հոկտ .

Կայսրուհին յառաջիկայ յունվար ամ-սոյ մէջ Անգլիա երթալու միտք ունի :

Լոնտոն 13 հոկտ .

Լրագիրք ոմանը կը ծանուցանեն թէ Ռուսաց քաղաքապետական սնտուկներէն շատերն ուրբերէն հաւաքելու անհարու-թեան մէջ գտնուելով՝ ամսականաց վճա-րումը դադարեցուցեր են :

Փարիզ 13 հոկտ .

Ռուսիոյ կայսերական պահապան զօրաց մեկնելէն ի վեր Ղազարտանի մէջ ապրս-տամբութեան կասկած կայ :

Տէպա լրագիրն հեռագիր մը կը հրա-

տարակէ ծանուցանող թէ Նիքոլա մեծ-դուքսն այնպիսի հեռանդութիւն մ'ախտա-ցեր է որ թոյլ չտար իրեն ձի հեծնել :

Լոնտոն 13 հոկտ .

Տէյլի Նիւսի մէջ հրատարակուած հե-ռագիր մը կը հաւատտէ թէ Պուրբէյն մէջ պաշարի և սպանութեան փոխադ-րութիւնը սաստիկ դժուարացած է : Յիշեալ լրագիրն խօսքին նայելով , Պուրբէ-յն ընկալուց կէտն և բաղմամբ զօրա-կանք ժամատակնդէ և թանջէ կը տա-ռապին :

Բեքրասուրկ 13 հոկտ .

Կայսեր անձնական բանակաւորներին փոխադրութիւնն աւելի հաւանական կե-րէի : Ռուսական զօրաց Ռուսմանի վերա-դառնալուն զորոյցները չեն հաստատուել : Մուխոմարի համալրակականաց դուրս Աքսաքոն՝ Ռուսիոյ կառավարութեան և կայսերական ազգատուքին դէմ ռուսն խօսքեր ըրած ըլլալուն պատճառաւ բան-տարկեցաւ :

Լոնտոն 19 հոկտ .

Սթանտարտ լրագիրը Ջիթոֆայէն հե-ռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Բոլխարձի լուր տուեր է Նիքոլա Մեծ-դուքսին թէ Ռուսական զօրաց համար հիւզեր չինելու սահմանուած նիւթերն Անգլիա դուրսէր է՝ իրեն արդիւնալ պա-տերազմական նիւթ :

Վիեննա 19 հոկտ .

Իտալիոյ թագաւորը Գարատաղի Նի-քիզա իշխանին շնորհակալութիւն յայտ-նեց Թուրք դերեաց և Խալաթ ժողովրդոց հետ մարդասիրաբար վարուելուն համար :

Փարիզ 19 հոկտ .

Ներքին վիճակը չիփխուեցաւ : Ղա-խարարութիւնը՝ հանրապետական լրագ-րաց յարձակումներուն՝ հակառակ՝ գաւա-ռական ընտրութեանց հսկելու համար պաշտօնին վրայ կենալու մտադիր է :

Լոնտոն 19 հոկտ .

Օտմ. Բօնս .	40 1/8
Փօխ .	1865 40 3/4
•	1869 40 1/4
•	1871 39
•	1872 18
•	1873 40 1/8
•	Կղխար . 56
Անգլ. Բօնս .	95 1/46

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Սերատոնի կուսակալ իդղէթ փա-շան՝ միանգամայն Կարնի առժամա-նակեալ կուսակալ անուանեցաւ , ար-տօնութիւն տրուելով իրեն որ Ասիոյ և Արարիոյ ամեն իշխանութեանց հետ թղթակցելով՝ Սիւիոյ բանակին հա-մար պաշար և այլ պիտոյք բերել տայ :

Մայրաքաղաքին անգլիական դես-պան Պ. Լայլըտ հինգ շաբաթի օրը վեհ-Սուլթանին հետ առանձինն տեսակցելու պատիւ ունեցաւ :

Յունական թրաքի լրագիրք կը ծանուցանէ թէ Բ. Դուռը քանի մը յոյն մետրապոլտաց պաշտօնական-թիւնն ու փոխթուրքներ խնդրել է յունաց Պատրիարքարանէն :

Յունաց Պատրիարքն ալ ի պո-տասխանի թագրեր մ'ուղղեր է առ Բ. Դուռն :

Յուսօք սրտի կը ծանուցանենք թէ Փափաղեան Ստեփան Եփէնտի 6 տարեկան աղջիկ զաւակը քանի մը շաբաթ հիւանդութիւն քաշելէ ե-տեւ՝ հինգ շաբաթի օրը մահկանացուն կնքեց ի դառն սուգ ծնողացն , ո-րոց մեր անկեղծ ցաւակցութիւնն յայտնելով՝ երկնից միտմարութիւնը կը մաղթենք :

Կարինէն սեպտ. 30 թուով Լէ-վանթ Հէրըլտի ուղղեալ նամակի մը մէջ հետեւեալ լուրերը կը կարդանք .

« Կաղաչեն ինձ որ կեդրոնական կառավարութեան ուշադրութեանը ներկայացնեմ հետեւեալ իրողութիւնն որ մեր գաւառին մէջ տեղի ունե-ցաւ վերջին օրերս :

« Արաշկերտի (քիւրտերէն) աւա-րաւութեան ժամանակ՝ Կարնի վաշ-տէն Բէտիֆ մը 15-16 տարեկան Հայ աղջիկ մը կը յափշտակէ Շողեր ա-նուն , գուսար Մարտիրոսի և Սուր-

թանայ , որք թօփարադ-Գալէէն երեք ժամու ճանաչալ հեռու Համլէր գիւղը կը բնակէին : Աղջիկն յափշտակող Բէ-տիֆը , թէ և գասալիք , բերեր զայն Կարնի մօտ գիւղի մը մէջ պահելու էր : Հայ հասարակութիւնն իմանալով զայս , ստիկանութեան յայտնեց , որ իս-կայն աղջիկը գտնելով գաւառին պա-հապան զինուորաց հաղարապետին տունը զրկեց , ուսկից գեռ հանուած և ծնողացն յանձնուած չէ : Արդա-րեւ գործն իտարէի ժողովին առ-եանն ելած է , և կրնայ տակաւին յուսացուի որ աղջիկն ետ տրուի և զօրականն ալ խաթիւ պատժուի իւր այս րրած յափշտակութեան համար , որով ոչ միայն զինուորական կանո-նաց հակառակ վարուած է , այլ և վեհ-Սուլթանին բացորոշ կամաց , որ հանապազ պատուիրած է իւր բո-լոր հպատակաց կեանքն ու ինչքը պաշտպանել առանց աղբի և կոծի խարսխութեան : Չեմ ուզեր հաւատալ , թէ և արժանահաւատ անձինք կը հաստատեն , թէ մինչև իսկ թոյլ չէ տրուեր որ Կարնի Արքեպիսկոպոսին կողմէ զրկուած քահանայ մը խեղճ աղջկան քով երթայ , կը հաստատեն նաեւ թէ ուրիշ չորս մանկամարդ աղ-ջիկներ քով վերոյիշեալ ցաւալի ան-ցից ժամանակ յափշտակուելով նոյն իսկ Կարնի քաղաքին մէջ պահուած են : Բայց կարելի է որ այս լուրը սուտ կամ չափազանց լինի : Առաւել հա-ւատարի իրողութիւն մ'այս է , որ իսկ անուն քիւրտ պէյ մը՝ Արաշկերտէն յափշտակուած չորս օրիորդ պահած է վանայ մէջ :

« Քիւրդերուն մասին՝ ուրախու-թեամբ կը ծանուցանեմ՝ ձեզ թէ սարսափելի Շէյխ Ճէլալէտտինն , ո-րոյ վրայ ձեր զինուորական թղթա-կիցն անուշտ խօսած է ձեզ , իւր տեղը վերադարձած ժամանակ , վա-նայ մօտ Հէյճիփան ըստած տեղին 200 Հայտերանցի քիւրդ ձիււորաց պա-տահարելով՝ ամբողջապէս կողոպտուեր է : »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
7 հոկտ. ուրբաթ իրիկուն			40,34
8 հոկտ. շաբաթ առաւօտ			
բացուեցաւ			40,31
ժամ 6 ին			40,32
Բուսնի երկաթուղի	Փր.	31	
Թղթագրամ	Լր.	189	
ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԱՊԹՈՑ			
Կ. Պոլսի 7 հոկտեմբեր			
Ստիթէ Եփէնտի Բաթ.	Անգլ. Լր.	3,10	
• Փոխտանկութեան	•	2,10	
Կ. Պոլսի Պատրիարք.	•	3,40	
Քրէտի Եփէնտի	•	3,42	
Քրէտի Օսթոլո-Թիւրք	•	—	
Փօխ .	1863	Ֆր.	54
•	1865	•	55
•	1869	•	52
•	1872	•	47 20
•	1873	•	50
Թրամուայ	Օտմ. Լր.	4	10
ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՑ			
7 հոկտեմբեր			
Անգլ. Լր.	զր.	409	
Նարոյնի տիկ.	•	86 20	
Իմէնիալ Ռուս	•	87 20	
Գըրըմից	•	54 10	
Հինգ ֆրանք	•	—	
Հինգնոց	•	415	
Պղինձ	•	464 20	

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Կրտսենք թէ Ղալաթիոյ ընկի ժողովուրդն երէկ հանրագիր մը մա-տուցեր է Գաղ. ժողովոյ , խնդրելով որ ըստ Աղգ. Սահմանադրութեան իւր ընտրական իրաւունքն իրեն վե-րագարեն :

« Գաղաքական ժողովն ալ իւր ձեռն-հասութեան վեր համարելով սոյն խնդրին՝ Աղգ. ժողովոյ տնօրինման ենթարկել որոշեր է :

Միք կը զարմանանք վարչու-թեան այդ որոշման վրայ , նկատե-

լով որ առեւ թաղի ժողովուրդ իւր ընտրական իրաւունքը կը վայելէ ցարդ , բայց Ղալաթիոյ թաղէն , ո-րոյ ընտրական իրաւունքը նախկին վարչութիւններն իրենց սեպակա-ներ են , պարզապէս Սահմանադրու-թեան 55րդ , յօդուածոյն դէմ զեղ-ծում մը գործելով . զեղծում մը , ո-րոյ բարձունքն անհրաժեշտ է , և իւր-եւ վարչական խնդիր Գաղաքական ժողովոյ ձեռնհասութեան կը պատ-կանի , քանի որ թաղական խորհըր-դոց ընտրութիւններն ինք կը վաւե-րացնէ ըստ Սահմանադրութեան :

Գաղաքական ժողովը վերոյիշեալ որոշումն ընելէ առաջ դո՛ւնէ պէտք էր դիմէր Աղգ. ժողովոյ ատենադ-րութեան , ստուգելու համար թէ Ղալաթիոյ ժողովրդեան ընտրական իրաւունքն Աղգ. ժողովն առնելով վարչութեան յանձնեալ է , թէ վար-չութիւնն ինքնին կապուեր է , նմա-նապէս պէտք էր դիմէր Աղգ. Սահ-մանադրութեան , տեսնելու համար թէ կայ անոր մէջ այնպիսի յօդուած մը որ Ղալաթիոյ ժողովրդեան ընտ-րական իրաւունքը վարչութեան ձեռք յանձնած ըլլայ :

Գանի որ ասոնք չկան , Գաղ. ժո-ղովը պարտական է իւր ձեռնհասու-թեան պատկանեալ օրէնքը ճշդիւ գործադրել՝ առանց որ և է նկատ-ման կամ ակնառութեան :

Խնդիրը շատ պարզ ըլլալով , չենք հասկնար թէ Գաղ. ժողովոյ այս տա-րօրէն ընթացքին ներքե ի՞նչ դադո-նիք կրնայ կենալ . . . :

ԽՆԴԻՐ ԲՈՐՏՐԱԳՈՅՆ ԿԻՐՈՒԹՅԱՆ

(Շաբ. Դեմ Բեմ 2035)

Անցաւ վրան երեք տարի , բայց խորհուրդը չմարմնացաւ : Նոյն միջոց-ներն յաճախ ծնող կը դիմեն մեզ զաւակին բարձրագոյն կրթութեան համար Եւրոպայի երկրու մասին խոր-հուրդ հարցնելու համար : Յոյս մը ծագեցաւ սրտերնիս . ինչ որ չյա-ջողեցաւ աղգովին ընել , փորձենք առանձին ընել : Ըսինք մեք մեզի . հաշիւ ըրինք որ եթէ 10-12 թոշա-կուոր աշակերտ ունենանք , կրնանք 2-3 աշակերտ ալ ձրի ընդունիլ : Կը մտածէինք որ անգամ մը եթէ գոր-ծը այս կերպով սկսի , այնուհետեւ երթալով կընդարձակի , մէկ կողմէն թոշակաւորաց թիւը աճելով , կարող կըլլանք ձրիավարից թիւն ալ ա-ւելցնել , միւս կողմէն աղբի մե-ծերն ու հարուստներն ալ իրենց ծախ-քով սաներ կը զրկեն , լուսաւորեալ երիտասարդութիւնն ընկերութիւն կը կազմէ գործին պահպանութեանն ու յարատեւութեանը համար , և վեր-ջապէս մասնաւոր ձեռնարկութիւնն ընդհանուր աղգային ձեռնարկու-թիւն կըլլայ : Ուստի հրաժարեցանք Շահապարեան վարժարանի տեսչու-թեանէ , յայտարարութեամբ մը նը-պատակիս բացատրեցինք և դը-նացինք հաստատուեցանք ի Զուլի-ցերի (1) :

Անկէ ալ յայտարարութիւն զըր-կեցինք հոս , տարիէն աւելի սպասե-ցինք , բայց յոյսերնիս ի դերեւ ե-լաւ : Մեր բարեկամները կը կարծեն թէ գործին անյաջողութեան պատ-ճառը Պոլսոյ դրամական տագնապն ու մեր նշանակած թոշակին քանա-

(1) Ասկէ ճանապարհ ելնելու միջոցնիս վսեմ . Ապրո Էփէնտի իր երկու որդւոց հակողութիւնը յանձնեց մեզ , որք արդէն երկու տարիէ ի վեր հոն էին : Վսեմ . Գ. Օտեան Էփէնտի ալ խոստացաւ չորս աշակերտ ալ Բարեգործական ընկերու-թեան ծախքով , բայց կերեւ թէ չյաջո-ղեցաւ համոզել իւր ընկերակիցները :

կուրծիւնն է : (Խրաքանչիւր աշակերտի տարեկան ծախք 2300-2500 ֆրանք նշանակած էինք) : Բայց անոնք որ գաւառիկն էր այսպէս կը զրկուէին, տարին 3000-3500 ֆրանք և աւելի ծախք կընեն, և այն առանց յատուկ խնամակալի, առանց աղ-գային լեզուի և պատմութեան գա-նախօսութեան : Ուստի կը կարծէինք թէ նշանակած գաւառիկն շատ չէր վերը բացատրած նպատակն ու հա-նելու համար (ձերականութեան հա-մար) : Չէինք կրնար անկէ նուազ պահանջել, մանաւանդ երբ աշակերտը սակաւթիւ ըլլային :

Մասամբ իրաւացի է՝ մեր բարե-կամաց կարծիքը, բայց գիտենք որ ուրիշ պատճառներ ալ կային, որոնք թէ և ոչ վերաբերեալն նման շահերէ, բայց աւելի աղքատ : Այդ պատճառ-ներն էին մեր աշխարհական և եկե-ղեցական կարգէ հակառակորդնե-րուն բանտարկութիւնն ու այն օտար քաղաքականութիւնն որ ամեն աղ-գային արգելեալու ձեռնարկութիւն իր խոնձարուքին մէջ խեղդել կը ջանայ : մանաւանդ երբ ձեռնարկողն իր մեքենայութիւններուն գէժ մա-քառակներէն է : Ասկէ 3-4 տարի ա-ռաջ այդ քաղաքականութիւնն այն աստիճան զայրացաւ, որ ամեն աղ-գային միջոց ի գործ դրաւ զմեզ ըս-տառապուռ կործանելու համար : Նոյն տոնները Ռուսաց գեաղական աւ մեծ դժգոհութիւն կը յայտնէ Նուարդ փաշային՝ ըսելով թէ իր վար-ժարանը հակառակօրէն որք է գործուցեր, և անոր տեսլութիւնն այնպիսի մէկու մ'է յանձնել, որ ժո-ղովնուռ ու իրաւունք մէջ ժողովուր-դը, վարժարանին մէջ ալ աշակերտ-ներն ու վարժապետները շարունակ Ռուսիոյ գէժ կը գրգռէ (1) :

Եւրոպիոյ մէջ Հայ առանձնապէս քաղաքա-նախնայ հաստատելու ձեռնարկութիւ-նը չէր կրնար ի հարկէ յիշեալ քաղա-քականութեան համակրութեանն ար-անանալ, ուստի և տարակից չկայ որ ամեն միջոց ի գործ դրուեցաւ անոր յաջողութեանն արգելք ըլլալու : Մեր խօսքերուն ի հաստատութիւն պատ-մական վիպութիւն մը մէջ բերենք : Մասնաւոր կաթողիկոս Էմիլիան Եր-թալէ առաջ կողմէ համագործակցի հան-գանակութիւն բանալ ի նպատակ ֆա-րիզու Հայկազեան վարժարանին, բայց հարկ կը համարի հասկանալ նախ թէ Ռուսիոյ կառավարութիւնն ինչ ոչ-քով պիտի նայի այդ ձեռնարկու-թեան վրայ : Ուստի ֆէօդալիզմի Ս. վարդապետն՝ ըստ պատուէրի նշանակ-ղիկոսին՝ նամակաւ մը կը հարցնէ Այ-վազեան Գործիչ վարդապետին, որ նոյն միջոցին Պետրասիկոյ առաջնորդ-նշանակուած և խաղաղական ուսումնա-նարանը բանալու վրայ էր : Եթէ հա-կառակ ինչ ինչ արգելք կ'աւանդէ ա-րարութեանը տարածումն շրջաբերա-

(1) Ասկէց կը հասկնուի որ Նուարդ փա-շա ալ այս պատճառաւ ձեռքը քաշէր է Ն. Դանապարեան վարժարանին օգնելէ : Բայց մեր կարծեաց, եթէ յիշեալ վար-ժարանը Ռուսական քաղաքականութեան ծաղիկը ըլլալու պայմանաւ բաց պիտի մնար Նուարդ փաշայի ջնդիւն, զո՞ք ըս-լալու ենք որ Նուարդ փաշան ձեռքը քա-շեց այդ վարժարանին : Բայց միւս կող-մանէ հողերէն Դանապարեանի նուիրա-կան յիշատակն անկորուստ պահելու համար ազգասիրական պարտականութիւն մը կը համարենք : Նուարդի ապարդիւն և անօ-գուտ անունը վրայէն վերջնական, յանուն Դանապարեանի միայն վարժարանը բա-նալու և շարունակելու համար հարկ ե-ղած ջանքն ու ձեռնառնութիւնն ազգային կամ ուրիշ բարերար ազգայնոց ջնդիւն ի գործ գնել :

Կանին (հանգանակութեան համար) ի կողմանաւ այդպիսի » Առ որ Գար-լիէն վարդապետ կը պատասխանէ . « . . . Պատճառք այսպէս վաղովն օրով չնորհեաց միջ ազգասիրութիւն բա-նալու աստէն ընդ իւրով ձեռնառն և հակադէմութեամբ ուսումնարանի տար-տի » այն է գլխաւորապէս, զի ոչ միայն Ռուսական պատանիք, այլ և ոչ իսկ Օսմանեան հպատակներ կար-տացին զիմը ի փարիզ յուսուէն և ի դատարարութիւն, այլ այս և և կեցողն (1) : Ռուսաց պետութիւնն ոչ ախորժ հաճութեամբ տեսնէ զյա-նախը նոյնին (Օսմանեան հպատակաց) խուռն բաղմունքի մը յԱնգղիա, յԱմերիկա և ի Գաղղիա, մանաւանդ զի զիմէ և զայն՝ զի երկուստեք ք-ումանք ի մերօրն ի փարիզ գեղ եր-եւալք կամ այլուր, ի դարձին իւր-եանց յԱմերիկա ոչ սակաւ գրգռեն զազգայնիցս իւրեանց յախուռն բա-նիւք և անխոհեմ գործածովք ընդ-գէժ Ռուսաց և քաղաքականութեան սոցիալ » (2)

Մեր ձեռնարկութեան անյաջո-ղութեան այս անհրաժեշտ պատճառ-ներուն վրայ կանխ առնուլ չենք ու-զեր, բաւական կը համարենք անոն-ցին վկայութեամբ ներկայի լուսա-ւորել, և առաջ կանչենք :

Պոյն վերադառնալէ առաջ ու-ղեցինք Անգղիական կրթութեան վը-րայ ալ մօտէն դատարար ունենալ, ուստի դնացինք Լոնտոն : Անգղիա-ցւոց վարժարաններն ունին իրենց լաւ և յառիկ կողմերը . սակայն այս մեծագործ ազգէն շատ լաւ բաներ կրնայինք սովորել և մեծ օգուտներ քաղել՝ եթէ ջանայինք աւելի յա-ճախ յարաբերութիւն ունենալ ա-նոնց հետ : Անգղիոյ մէջ ամեն հա-սարակաց հաստատութիւն ճոխ ու հոյակապ է, ինչպէս և բարձրագոյն վարժարաններն ու այլ ուսումնական տեղերը : Ուսկայն ուսմանց ծախքն ուրիշ երկիրներու վրայ գրեթէ ե-ւաւորապէս է, և ուսելիքը գրեթէ կրկնապատիւր : Իսկ բնակարանն ու հագուստն ուրիշ տեղերէ գրեթէ տարբերութիւն չունի : Անգղիական կեանքը՝ Անգղիական բնակարանութիւ-նը՝ այնպիսի լաւ կողմեր ունի՝ զորս անկարելի է չօրհնել, չյարգել և ու-սումնասիրել ու իւրացնել չբողջալ : Մեր ընդհանուր նպատակին՝ այսինք-քն ազգային բարձրագոյն կրթու-թեան համար՝ յարմար է Անգղիա իւր սղութեան պատճառաւ . բայց գէշ բան մ'ըրած չեմք ըլլար՝ կար-ծեմ, եթէ Լոնտոնը տանք մեր այն ազգայնոց՝ որոց զգալի չէ տարին քա-նի մը ոսկի աւելի կամ պակաս ծախք ընել, որ իրենց գաղկնիքը Անգղիա գրկեն : Ողք ամառը շատ լաւ է, ձը-մեռը փոքր ինչ միջապատ . բայց առօրէ կանտարայի խաչէրէնէն քաղցէ մէջ, որ ամենէն յարմարագոյնն է օտարականաց համար, ամեն ազգէ և ամեն երկրէ բազմաթիւ ուսանողք տեսնել, իսկ Հայ միայն մէկ երկու հոգի (Հնդկաստանցի) : Յաւանք է որ ինչպէս Հայերը նոյնպէս և ճանիկե-րը Գերմանիայի, Չեխիայի և Անգ-ղիոյ հետ աւելի սերտ յարաբերու-թիւն չունին :

Արգ խօսինք այժմ մասնաւորա-պէս թէ մեր ազգը քաղաքակիրթ

(1) Ռուսիոյ կառավարութիւնը տարին տասնմէկ հազար քարպէն կը վճարէ, որպէս զի այդ գումարով Տաճկաստանէն Հայ աշակերտը բերուն և խաղաղական ուսումնարանին մէջ կրթուին : Այս ա-ռատաճեալութեան նպատակը բացատ-րելու պէտք չկայ :

(2) Տես պատմութիւն անցից Մուրա-տեան և Հայկազեան վարժարանաց, հա-տար Գ. էջ 109, 111-112 :

ազգաց բարձրագոյն կրթութեան հաստատութիւններէն օգտելու հա-մար ինչ ընթացք բռնելու է : Հ. Ի. (Դարձանքն)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Իւրապական լրագիր մը կըսէ թէ այժմ հի վրայ երեք մարդ միայն կ'ոյ լանտարայի Ռոշիլաէն հարուստ .

1. Վէսթմինսթէրի մարքիզն, որ 280000 անգղիական լիրա տարեկան եկամուտ ունի :

2. Նէվատտայի Մարքէյ Ժնրակու-տականն, որ 275000 անգղիական լիրա տարեկան եկամուտ ունի :

3. Նէվատտայի Ջոն Ժնրակուտա-կանն, որ 200000 անգղիական լիրա տարեկան հասցիւթ ունի :

Իսկ Լանտարայի Ռոշիլաէն տարե-կան հասցիւթն է 180000 անգղիական լիրա :

Ամերիկան գտնուլ ֆրիսթօմֆ ֆո-լուպոն ի թիւս սրբոց պատկու խըն-գիր մատուցուելով Հոմսի Ս. Ժողո-վին, Ժողովն երկար ըննութենէ ե-տեւ՝ չէ ընդունել որ այս խեղիւր՝ պատճառ ցուցնելով թէ ֆրիսթօմֆ ֆոլուպոն չի բնականաբար և նշանաւոր կաթիլիկ մ'ըլլալու փորձեր տուած չէ իւր կենդանութեան ժամանակ, ոչ ալ սրբութեան համար ուսուցած և իրել այն զինքն յօդուութիւն կարգացող մ'ունեցած :

Այս մեթոմի վրայ երեք տարի ժամանակ պէտք է անցնի, որպէս զի առաջարկութիւնը կարենայ նորագործել :

Լ.Օ.Ի

Յառաջիկայ կիրակի (հոկտ. 9) Եէնի-Գարուի Հայկանոյ վարժարանին մէջ ժամ 7ին պիտի տեսնախօսեն Մեծ Տիգրան Էֆենտի Մանապեան, որոյ նիւթը պիտի ըլլայ Մարդուս բընա-կան և բարոյական պէտքերը, և Միհրան Էֆենտի Մեյիսանէճեան, որ իրեն նիւթը ընտրած է «Հայուն ճա-կատագիրն» :

Յիշեալ վարժարանի դաշնակի դա-սասու Մեծ կարապետ Էֆենտի Պ. փառապետ սոյն Աղգային տեսարանին ներկայ դառնուելով դաշնակաւ պիտի պատուէ ունեցողք ազգայններն, և Ս. Առաքելոյ վարժարանի երգեցիկ մանկունքը ալ պիտի երգեն :

Աւելորդ չեմք համարել յիշել թէ նոյն օրն Հայկանոյ վարժարանի օրի-որդաց սեպտեմբեր ամսոյ մէջ պատ-րաստած ձեռարուեստներէն մէկ մա-սին վիճակահանութիւնն ալ պիտի կա-տարուի, որոյ տոմսերը միայն 100 հաս- են և արգէն հատը երեք զրջ գնով շրջաբերութեան ելած և մեծաւ մա-սամբ ապագած են :

Աղգային արք և տիկնայք անշուշտ կը փութան անձամբ պատուել սոյն հարկերն, որուն համար կանխու կը փութանք մեր մեծարանաց հաւաս-տին մատուցանել :

1877 հոկտ. 6 Հմայեակի Վ. Գիմարեան Նէնիկարու

Լ.Օ.Ի

Հայկական կրթարանի անօրէնու-թիւնը պատիւ ունի ծանուցանել մե-ծարդոց հաստարակութեան՝ որ յիշեալ հաստատութիւնն փոխադրուած է ի թաշ-Նէտիրպան (յՈրթաքէյ) Սէթլի փողոց թիւ 5 տունն, որ ընդարձա-կութեան և առողջարար օգոյն կող-մանէ յարմարագոյն է գիշերօթիկ վարժարանի :

Յ. Գիմարեան

Ի Լ Ա Ն

Նանը աղիղ խաղերի հատրու-թընտան օլարագ ֆիրուիթ օլուն-

մագ իւզրէ մէջմուտ օլան իւշ եիւզ պին գըյէ քէփէկին պէհասը եիւզ-լիւք քայիմէ 100 դուշա օլարագ պէր վէճէր վէշին վիրիլէրէք օթուզ կիւնէ դատար տէ յիւմէնէրտէն գալ-տրըրմագ շարթը իլէ պէհէր գըյէ-սի օթուզ պուշուգ փարայա օլարագ թալիպի էօհաէսինտէ օլուպ թըշրինի էվիլէլը բուսինին սէքիլիննի ճուսա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վի-րիլէրէք ֆիրուիթ օլունտագընտան, տահա զիյատէ ֆիլյաթիէ իշթիրարը-նա թալիպ օլանարըն եէվմը մէդ-քիւրտէ Տարը Շուրայի աքքիլէ կէլմէլէրի :

և թըշրինի էվիլէ 1877 4 Պապը Սէրասքէրի

Պէշ քուլաճըք քէպիր Գասթա-մանի իլիի, առէա երկիրմի պէշ պին, պէհէրի իւշ պուշուգ զըշ :

Պէշ քուլաճըք սաղիր Գասթա-մանի իլիի, առէա օթուզ պին, պէ-հէրի իլի զըշ :

Գըրքըլընտան պէլի պաղըր Գաս-թամանի իլիի, առէա ալթըր պին, պէ-հէրի օն զըշ :

Իղմիր եօղդանը, առէա իւշ պին, պէհէրի սէքիլ զըշ :

Սէքիլ քուլաճըք թէրպիլի իլիի, առէա ալթըր պին, պէհէրի եէթմիլ փարա :

Պէշ քուլաճըք թէրպիլի իլիի, առէա սէքիլ պին, պէհէրի ալթմիլ փարա :

Տէօրթ գուլաճըք Գասթամանի իլիի, առէա օթուզ պին, պէհէրի էլ-լի փարա :

Գասն թօսի պին, պէհէր թօսըր տէօրթ զըշ :

Առաքիլի շահանէ մայիմայ քօ-միսինը իշուն թարիսի քօնթրաթօ-տան իթիպարէն ալթըր այս թադիմ իլէ թէպիմ օլունմագ վէ մագպուզ սէնէտլէրի վիրուտինտէ էամանը եիւզ-լիք գայիմէ եիւզ դուշա օլարագ պէր վէճէր վէշին իթա գըլընմագ շարթը իլէ միւղայեա օլունտագ պալատէ մարագգամ սէքիլ քալէմ իլի ֆիլյաթը մարագ գալէլէրի իլէ թալիպի էօհաէսինտէ օլուպ թըշրինի էվիլէլը բուսինին սէքիլիննի ճու-սա իրթէսի կիւնի գարարը գաթիսի սի վէրիլէճէյնտէն, իթա իթմէյէ թալիպ օլանարըն եէվմը մէդքիւր-տէ Տարը Շուրայի աքքիլէյէ կէլմէ-լէրի :

4 թըշրինի էվիլէ 1877 4 Պապը Սէրասքէրի

Առաքիլի Շահանէ լէվաղիմաթը իշուն միւթէհալիպէրի թարաֆընտան գօնթրաթօլէրինէ մահաուպէն էլալիսէ անպարընա կէթիլըմէքտէ օլուուգ-լարը հէր նէվի չուհա վէ սայիլէտէն էվիլմիտան վիրուտ իտէճէքլէրին կէօմ ըրկտէն իրարձնտա պալէալէրի ա-չըլմայարագ կէթիլըրիլըւպ անպա-րընտա անպար մէմուրը վէ մուայէնէճի-լէր հաղըր օլուուպ հալտէ էմանէթ մաղաղաղաղա քիւշատ իտիլմէսի, վէ շայտ իշլէրինտէ ալթը պօղուգ պալ-եա զուհուր իտէրտէ դապուլ օլուն-մամսը, վէ մէդքիւր էմանէթ մաղա-գաղաղա սաղիֆ էղղիքը մէմուրէր հաղըր օլմարըքմա թիւճճարտէն գա-թիլէն մաղաղայա տուսուլ իտիլմէմ-սի, վէ իշպու չուհա վէ սայիլէ մէմու-րինի միւմայիլէյիլմ մուվաճէհէսին-տէ անաղիլ իտիլմէսիքմէ անպարը մախսուսէ վաղ գըլընմամսը գաթիլ-տէն պէրու ուսուլը միւթթիլմէսէսիլ իճապնտան օլմաղլէ քէֆիլիթ միւ-թէհալիտին մալիմէրի օլմաղ իւզրէ-իւն վէ իշպէ օլունմիլ ալթը :

4 թըշրինի էվիլէ 1877 Պապը Սէրասքէրի

